

5. Նոյն ինքն ի բնութենէ Հօր:

Ասիկայ յունարէն բնագրին ὁμοούσιον τῷ Πατρὶ ἵν ἡρ պատասխանէ՝ որն որ սովորաբար համադրոյալից Հօր բնելով կը բացատրուի: Աս մասին մէջ ընթերցուածոյ տարբերութիւն զաներու համար շատ հին դարերու ելելու է: Ճիշդ աստեր չենք կրնար նշանակել թէ երբ սխաւ այս «նոյն ինքն ի բնութենէ Հօր», բայց 12<sup>րդ</sup> դարուն արդէն աս էր տիրող ընթերցուածք: Ասանկ է Լամբրոնացոյ Պատարագամատուցիւր եւ ամէն մեր տեսած գրչագրաց մէջ՝ որոնք նոյն դարը չեն անցնիր: Բ՛ւինք «տիրող», վասն զի նոյն Ս. Հայրը հանդանակին Բացատրութեան մէջ այսպէս ալ կը կարգայ. «նովին իսկ բնութեամբն Հօր»,:

Սակայն 7<sup>րդ</sup> եւ 8<sup>րդ</sup> դարուց մատենագիրներէն յայտնի է որ այս թարգմանութեան սկզբնական ընթերցուածն այս չէր, հասարակ նոյնբնութիւն Հօր, ուստի ածական անուն մը, ճիշդ թարգմանութիւն ὁμοούσιονին: Ասանկ կը կարգայ Յովհան Խնատասէր, ինչպէս վերը տեսանք, ասանկ Մովսէս Վերթող<sup>1</sup>, եւ անոնցմէ առաջ Ներսէս Երնող 7<sup>րդ</sup> դարուն<sup>2</sup>: Ասկէ ալ առաջ Յովհաննէս Բ. կաթողիկոս<sup>3</sup> իրեն մէկ (զեռ չհրատակուած) ճառին մէջ («Վասն յերկուց բնութեանցն ասկ զՎերիտոսս») սոյն ընթերցուածոյն համեմատ կ'ըսէ. «նոյնբնութիւն (այս ինքն) էակից) Բան Հօր»,:

Բայց որովհետեւ սովորական չէ աս բացատրութեան ձեւը, «նոյնբնութիւն», փոխանակ «նոյնարուն», (ինչպէս կ'ըսուի «անապականումն»<sup>4</sup>, կամ «անապականութիւն»<sup>5</sup>, փոխանակ «անապական», բնելու) անցմամբ ժամանակաց՝ ան մէկ բառը կամնոց կամնոց երկուքի բաժնուեցաւ այսպէս. «նոյն բնութիւն», եւ ասկէ յօրինեցաւ աս ձեւը. նոյն ինքն ի բնութենէ Հօր, որուն քերականական լուծումը շատ արդէ ըրած է Վերապ. Աղուարդ Հիւմիլիզեան<sup>6</sup> ցուցնելով որ նոյն է աս ձեւին հետ «Ի նմին ինքնէն բնութենէն Հօր»,:

Սա դարձեալ մտադրութեան արժանի է որ այս «նոյնբնութիւն», բառին ծագումը 6<sup>րդ</sup> դարէն շատ առաջ է. վասն զի նոյնը նաեւ ան զուտ Նիկիական հանդանակին մէջ ալ կը զանուի՝ զորն որ անշուշտ գործածեցին մեր 5<sup>րդ</sup> դարու Հարթը, եւ զորն որ հիւմայ նոյն դարուն սեպհական եղած հայերէն լեզուաւ ձեռքերնիս

<sup>1</sup> Ճառ Վարդապ. ի Գործս Խորեն:

<sup>2</sup> Առ Սերէոսի. տպ. Պետերբուրգ. 1879, էջ 129:

<sup>3</sup> Կաթողիկոսական աթոռ նստած իր 556 ին. բոս Հեղինակին ժամանակագրութեան: Ծ. Հրտ.:

<sup>4</sup> «Չանապականումն» յարգանդի քում կրեցեր: Արդեօք տպ. սխալ չէ՞

մեր օրինակներ փոխանակ «անապականումն ի յարգանդի» ըլլալու, ինչպէս ունին ուրիշ օրինակք:

<sup>5</sup> «Մարմին» դոր ի մէջ էառ, անապականութիւն էր. թղթ. Արդիս. առ Ներս. Բ.:

<sup>6</sup> Տեսական Աստուածար. Հատ. Ա. էջ 384, տպ. Ա.: